ՔԱՂԱՔԱԿԱՆԱՑՎԱԾ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԱՐՑԱԽ

«Առաջ Հայաստան, առաջ դեպի Աստված». թերեւս ոչ պատահականորեն այս կարգախոսն էր ընտրվել օրերս մեկնարկած ուխտագնացության համար, ինչը հայտնի նախընտրական կարգախոսի ենթատեքստով էր պայմանավորված: Այն, որ եկեղեցին Սերժ Սարգսյանի կողքին է եւ նրա համար է աշխատում, վաղուց ի վեր պարզ է բոլորին: Բայց, հավանաբար, այդ հանգամանքը պարբերաբար հիշեցնելու կարիք կա: Մայիսի 1-ին «Համահայկական երիտասարդական կենտրոնը» եւ «Հոգեւոր-մշակութային վերածնունդ» հիմնադրամը, համախմբելով ՀՀ երիտասարդական միություններին, ուսանողական կոլեկտիվներին, ՀՀ պաշտպանության նախարարության եւ Արցախյան ազատամարտին մասնակցած ազատամարտիկներին, կազմակերպեցին «Առաջ Հայաստան, առաջ դեպի Աստված» համահայկական երկօրյա ուխտագնացություն՝ Մայր աթոռ Սուրբ Էջմիածնից դեպի ԼՂՀ՝ Շուշիի Սուրբ Ղազանչեցոց եկեղեցի: Ուխտագնացության մասնակից ուսանող Ռուբիկ Վարդանյանն առաջին անգամ էր Արցախում: Պարզվեց, որ նա

Լուսինե ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ

միջոցառման այն եզակի մասնակիցներից է, որը ոչ միայն գիտի, թե ինչի համար է եկել Արցախ, այլ նաեւ բարձրաձայն արտահայտվում է այդ մասին. «Էնքան հիացած ենք Արցախի բնությամբ եւ օդով: Բայց ինձ համար այս ուխտագնացությունն այնքանով է կարեւոր, որ ես եկա եւ տեսա, թե ինչպիսին են ղարաբաղցիները, եւ ինչ է իրենից ներկայացնում Արցախ ասվածը»: Նա կարծում է, որ ուխտագնացության յուրաքանչյուր մասնակից պետք է խորապես գիտակցի, որ ղարաբաղցի-հայաստանցի տարաբաժանումը սխալ է, եւ որ մենք բոլորս էլ հայ ենք:

Շուշիի Ղազանչեցոց եկեղեցու մոտ ուխտագնացներին դիմավորեց ԼՂՀ պատվիրակությունը՝ Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, զոհված ազատամարտիկների ծնողներ: Առաջին տպավորությունը, որ ստեղծվեց ուխտագնացության մասնակիցներից, հոգնածության մասին՝ ուխտագնացության իմաստն այդպես էլ տեղ չհասավ:

Ուխտագնացության մասնակիցները Ստեփանակերտի երիտասարդության պալատի դահլիճում հանդիպեցին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին: ԼՂՀ նախագահը Արցախի ժողովրդի եւ իշխանությունների անունից ողջունեց հյուրերին եւ նշեց, որ հայ ժողովուրդը միայն միասնականության դեպքում կկարողանա հաղթահարել իր առջեւ ծառացած դժվարությունները:

Հանդիպման ողջ ընթացքում երիտասարդների անցուդարձը դահլիճում չէր դադարում. երիտասարդության պալատի դիմաջանցքը ծգում էր նրանց, այնտեղ երիտասարդները հավաքվել էին ծխախոտի շուրջ: Հանդիպման վերջում հյուրերին ճանապարհեցին երգուպարով՝ այդպես էլ գլխի չընկնելով, որ երիտասարդներին միավորել էր ոչ թե քաղաքականացված ուխտագնացությունը դեպի Աստված, այլ անվճար ժամանցի հնարավորությունը: